

– Ո՛ր կ'երթաս, հրաւեր դրկէ սա մարդուն, որ գայ, սեղան պատրաստել տո՛ւր, մարդկութիւն չէ մնացեր աշխարհիս վրայ:

Դարձեալ Տիկինը ելաւ դուրս, կանչեց աղախիները, պետք եղած հրամանները տուաւ: Եւ ահա քանի մը վայրկեան վերջը Գուրգէն կը մտներ իշխանին քով, որ իւր անկիւնը բազմեալ ըսաւ.

– Արի՛, տեսար Սուրբն, նստէ եւ ներէ թէ որ միևչեւ հիմա գքեզ թողիւք, բայց մենք ալ գբաղած էինք մեր վերքերով. ուստի՞ Է քու գալուստդ, այսպիսի վտանգաւոր ժամանակներով քու զօրութիւնդ եւ քաջութիւնդ ունենալու Է, որ մարդ համարձակի առանց թիկնապահի, առանց ծառայի, առանց ընկերի ուղեւորուիր

Այս խօսքերուն տարտամ պատասխաններ տուաւ Գուրգէն եւ ամենայն ուշադրութեամբ եւ գազանութեամբ սենեկին ամենայն մութ խորշերը, վարագոյրները եւ վանդակները կը դիտեր: Սեղանը եկաւ. իշխանը Տիկինը հարցուց, բայց նա անհանգիստ էր, Սուշեղ ինք ալ ախորժակ չունէր եւ կը գարմանար, որ Գուրգէն հագիւ թէ քանի մը պատառ առնելով քաջուեցաւ: Իշխանն էլ իւր անկողնոյ սենեակները մտաւ: Եւ բոլոր Կ'անգուարի բնակիչները քուն եղան: Յեղինէ տիկինը, պառաւին հրամանն ի գործ դնելով՝ բերաւ տեսակ մը օշարակ, որ լաւ քունի համար պատրաստէր էր, եւ նա էլ «անիծեա՛լ պառաւը» կրկնելով գաւաթը պարպեց եւ խոր քուն ի մէջ թաղուեցաւ:

Ան ատեն կանչեց Յեղինէ իւր միմիայն աղախինը, որ Ռշտունեաց երկրէն հետը բերէր էր, ոչ միայն հաւատարմութեան, այլ նաեւ քիչ խօսեւուն համար, եւ հրամայեց, որ իշխանին ամենտափոքր շարժմունքին իրեն իմաց տա, եւ ինք ուղղեցաւ համարձակ Գուրգէնի սենեակը: Եւ ինչպէս կ'երեւակայէր, երբ դուռը բացաւ նա արթուն էր եւ նստած վառարանին բոցին կը նայէր խոր մտածութեանց մէջ ընկղմած: